

96

5

F - 89



ԲՈՐՈՎԻՑԿԻ

216/129

# ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

(Գործնական մաս)

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՆՍԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ

1938

ՀԱՐՄ  
Հ2-342a

5  
F-89

ԲՈՐՈՎԿԻՑԻ


2005

# ԲԱՍԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

(Գործնական մաս)

63/

63/



06 MAR 2013

96

04 MAY 2010

## ԹԱՐԳՄԱՆՉԻՑ ՅԵՎ ԽՄԲԱԳՐՈՂԻՑ

Բորովիցկու «Բնագիտության մեթոդիկա» գիրքը հրատարակվեց անցյալ տարի, բայց վորոշ կրծառական կամաց աշխատանքին ընդառաջելու համար կարենոր գտնվեց այս տարի հրատարակել հիշյալ գրքի կրծատված մասից մի շարք նյութեր, ինչպես տարբեր տեսակի դասի կոնսուլեկտներ, նյութեղենի, ոժանդակների ցուցակ:

Բորովիցկու գրքում բերված կոնսուլեկտները կազմված և իրագործված են կենճնգրադի գպրոցների դասառանքների կողմից:

Սկսնակ դասառանքն իր աշխատանքն արդյունավետ անցկացնելու համար, իր թերությունները, զրական կողմերը լավ իմանալու համար պետք է կազմի դասի ընդարձակ կոնսուլեկտներ, մանավանդ պետք է լավ նախատեսներ թե ինչ փորձեր պետք է դնի, ինչ պիտույքներից ոգտվի: Բերված կոնսուլեկտասերից մեկը վերաբերում է լաբորատոր՝ դասին, որին խավարատերի հերձումը: Դասառանքն առաջանակած ու փորձված է, այնքան ել նրա դասի պլան-կոնսուլեկտն անելի պարզ, հակիրճ կլինի: Նրա համար կարիք չկա նվազագույն կոնսուլեկտասեր կազմելու, բայց այդ չի նշանակում, թե նա ազատվում է դասի պլան ունենալուց:

Նյութն այսպես է բաշխված:

Առաջին բաժինը կոնսուլեկտ-դասեր բուսաբանությունից (սերմ, ցողունի կառուցվածք, պտերանմաններ), այնուհետև՝ ուսումնական պիտույքներից ուցակ, կենդանի ձևով ոգտագործվելու նյութերի ցուցակը, գրականությունը:

Յերկրորդ բաժինը՝ կենդանաբանությունը (Խավարամերի հերձումը—դասի ընդարձակ կոնսուլեկտ), կենդանաբանության դասընթացի պիտույքները:

Յերրորդ բաժինը՝ Մարդու անառանձիւթյան և ֆիզիոլոգիայից պլան-կոնսուլեկտ (ֆերմենտներ), պիտույքների ցուցակը:

Թարգմ. խմբ. Ռ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Սրբագրիչ Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Գլավլիսի լիազոր Տ.—9560 Պատվիր № 134, Տիրաժ 800

Հանձնված ե արտադրության 10 ապրիլի 1938 թ.

Սառարդված ե ապելու 21 ապրիլի 1938 թ.

Ուսուցիչ. Վորակավորման ինստիտուտի տպարան, Մարգարիտ. Փ. № 173 Յերևան



5357-87

Չորրորդ բաժին: Ուսումնական պիտույքներ, ցուցակ  
հվոլուցիոն թեորիայի գաղընթացի վերաբերյալ (ըստ առանձին  
թեմաների), գրականություն:

Բերված ցուցակները պետք են ոքնեն մանավանդ սկսնակ  
դասատուին՝ նախորոք հոգալու անհրաժեշտ պիտույքների մա-  
սին, և լուրջ մտածելու դպրոցական կարինետի համապատասխան  
սարքավորման մասին:

Բերված կոնսպեկտակաների մեկ մասը նախատեսված է  
յերկժամանակակից դասի համար:

Բնագիտության դասերը, մանավանդ այնպիսիները, վո-  
րոնք պահանջում են փորձ, դիտողություն, առավել և լաբո-  
րատոր դասը, որինակ՝ կենդանու հերձումը—դժվար և մեկ  
ժամում առանց շտապողականության, արդյունավետ անցկացնել:  
Յեթե դպրոցում ընդունված է միժամյա դաս, ապա նյութի  
ծավալը քիչ պիտի լինի, սակայն լաբորատոր դասերի հա-  
մար, միկրոսկոպային աշխատանքների, դիտումների, փորձերի  
հետ կապված դասերը պետք են յերկժամանական:

Բնագիտության մեթոդիկայի գրքի հաջորդ հրատարակու-  
թյան ժամանակ նկատի կառնվի մեր դպրոցական աշխատանքի  
հաջող փորձը (մեր դպրոցներում փաստացի անցկացրած որինա-  
կելի դասերի, լաբորատոր դասերի մի ժամյա և յերկժամյա դա-  
սերի, կոնսպեկտականները):

## Բ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

## Ա. ԲՈՒՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

### I. ԴԱՍԻ ԿՈՆՍՊԵԿՏՆԵՐԻ ՈՐԻՆԱԿՆԵՐ

#### 1. ՍԵՐՄ

5-րդ դասարան 154 դպրոցի, դաս 6-րդ—3. 10-րդ 193 . . . թ.

Դասի թեման. Սերմ: Նրա ծլումը և սերմերի նախապատ-  
րաստումը ցանքսին.

Յենթաթեմա 1. սերմի կառուցվածքը:

Աշխատանիքի պլան

- |  |         |
|--|---------|
| 1. Ուսումնասիրվող թեմայի նշանակությունը (ներածական<br>զբույց)                                      | 5 րոպե  |
| 2. Աշխատաների հիմնական կուլտուրական բույսերի սերմե-<br>րը տարբերելու կարողության (յանակ) ստուգումը | 15 րոպե |
| 3. Սերմի կառուցվածքը   | 60 րոպե |
| 4. Աշխատանքի ամփոփումը   | 10 րոպե |

Դասի բովանդակությունը

1. Ներածական զբույց.—1. Կապնանցած թեմայի հետ:

2. Ծաղկավոր բույսի կյանքն սկսվում և սերմի ծլումից\*,  
այդ պատճառով ել մենք բույսի կյանքի ուսումնասիրությունը  
սկսում ենք սերմից:

Մեր զբույցի թեման եւ.—Մերմը, նրա ծլումը և  
սերմերի նախապատրաստումը ցանքսին (գրել խոս-  
շոր շրիփտով և ընդգծել կրկնակի գծով):

3. Մեր հետաքրքրում են այդ հարցերը.—ինչպես և սեր-  
մերի կառուցվածքը: Վարագեղից են առաջ գալիս ծիլը: Ինչպես և  
կատարվում ծիլերի զարգացումը: Ի՞նչպիսի պայմաններում են  
սերմերն ավելի լավ ծլում: Զի՞ կարելի այդոք ավելի լավ  
պայմաններ ստեղծել:

\* Այդ նախադասությունը չհանկանալ այն մտքով, թե սերմը ծլելուց առ  
աջ կյանք չունի: ԽՄԲ:

Իրա համար մենք պետք եւ ծանոթանանք սերմերի կառուցվածքին, սերմերի կազմությանը, սերմերի ծլման համար անհրաժեշտ պայմաններին, սերմերի նախապատրաստմանը ցանքսին:

4. Սերմերի ծլման պայմաններին և ցանքսային նյութի վլորակի ուսումնասիրությունը հոկայական նշանակություն ունի մեր խորհանութեային և կոլտնութեային դաշտերի բերքատվության բարձրացման գործում:


11. Սերմերը զանազան ելու կտրողության ստուգումը. 1. Տալյուրաքանչյուր խմբին (յերկու հոգուց) փորձանոթների մեջ հետեւյալ սերմերի խառնուրդը.—լոբի, սիսեռ, տարեկան ցորեն, գարի, վարսակ, յեղիպտացորեն, հնդկացորեն, արինջ (գրեչիա), արևածաղիկ, վուշ, գաղար, կաղամբ, կորեկ, մանամիս, վիկ, խրապուկ (ՕԲԾՈՐ), տերեկուկ:

2. Բացատրել վոր հարկավոր եւ թղթի վրա (թերթի յեղբերը ծալիւ վորպեսզի սերմերը չթափին) փորձանոթի սերմերը ջոկել կույտուկոյտ և յուրաքանչյուր կույտի մոտ գրել սերմերի անունը: 3. Ստուգել, ինչպես ջոկեցին:

111. Սերմերի կառուցվածքը: Սերմերի կառուցվածքին ծանոթանարու համար վերցնենք ալիքի խոշոր սերմեր: Սկսենք լորու ամենախոշոր սերմերից (Փրոնտալ աշխատանք):

1. Լոբու սերմերի կառուցվածքը (գրել և ընդգըռ մեկ գծով) ա) համեմատել չոր և թրջած սերմերը և նրանց նկարել բնական մեծությամբ: Նկարների տակ գրել (նկար 1):

բ) Սերմերի արտաքին տեսքը գիտեմիս գտնել այն պատիկ սպին, վորով սերմը կպած եր պաղին (ցույց տալ լորու բացված պառուղը՝ նրան ամրացած սերմերի հիմ), այն անցքը, վորով սերմի մեջ ող և մտնում, և սաղմային արմատիկի տեղը: նըկարել սերմը կողքից և սպիկ կողմից: մակաբրություններ անել (նկ. 2):



Նկ. 1. Լոբու չոր և թրջած սերմեր (աշակերտի տեսք):

գ) Եղել (յեղունգով փորձել) չոր և թրջած սերմի կճեպի առանձնահատկությունները: Վար սերմից կճեպն ավելի հեշտ և հանգում:

դ) Կճեպը հանելով, դիտել ինչպես ե կառուցված սաղմը: Վորպեսզի սաղմի մասերն ավելի պարզ յերկան և նրանց նշանակությունը ավելի հսկանալի լինի, սերմի սաղմը դիտելու ժամանակ համեմատում են նրան լորու ծլած սերմի սաղմի հետ:

Նշել շաքիլները, գտնել սաղմային արմտափկը, սաղմային բողբոջը, ցողունիկը: Նկարել լորու սերմի կառուցվածքը (նկ. 3)



2. Յեկի պատացորենի սերմի կտրուցվածքը (գրել առնենի):

Այստեղ մենք գործունենք միասերմ պրտղի հետ, վորի թաղանթը կպած, և սերմին: Այդպիսի պատուղը կոչվում է հատիկ (ՅԵՐԵՒԱԿԱ):


ա) Գտնել սաղմը (նկարել սաղմի արտաքին տեսքը):

բ) Հատիկը կտրել յերկայնությամբ և դիտել նրա կառուցվածքը:

Սաղմի մասերն ավելի լավ ջոկելու համար համեմատել չըծլած հատիկը ծլած հատիկի հետ: Նշել ենդոսպերմը, շաքիլը, սաղմային արմտափկը և սաղմային բողբոջը: Նկարել հատիկի կառուցվածքը և տակին գրել (նկ. 4):



Նկ. 3. Լորու սերմի կազմությունը:



Նկ. 4. Յեզիպտացորենի սերմի արտաքին տեսքը և կազմությունը:

3. Միսեսի և տարեկանի կամցորենի սերմերի և առուցվածքը (ինքնուրույն աշխատանք):

Աշակերտները, դիտելով սերմերը, իրենք են լուծում, թե ինչ սերմերի յի՞ն նրանք նման և ի՞նչպես եւ կառուցված նրանց սաղմը (ստուգում գրատախտակի մոտ): (Նայած դասարանի դարձացման այդ աշխատանքը կարելի յի մշակել այս դասին, կամ հետաձգել մյուս դասին):

IV. Յեզրակացություն. Մենք ծանոթացանք սերմերի յերկու խմբերի կառուցվածքին: Վոմանք ունեն յերկու շաքին վորոնց մեջ ամրացված եւ սննդարար նյութերի պաշտը, մյուսները — մեկ շաքին սննդանյութերն ամրացված են սերմի հատուկ մասում — ենդոսպերմում:

Հստ շաքիների քանակի տարրերում են — յերկշաքի լը բույսերի սերմեր (սիսեռ, լորի և այլն) և միաշաքի լը բույսերի սերմեր (տարեկան, յեզիպտացորեն և այլն):

Ուսումնական ոժանդակների ցուցակ (տես՝ աշխատանքի պլան): Տնային առաջադրանք (տես՝ աշխատանքի պլան):

Այսպիսի մանրամասն պլան-կոնսպեկտը հարկավոր եւ գլխավորապես սկսնակ դասատուին: Փորձված դասատուն սովորաբար սահմանափակվում եւ համառոտ պլանով, վոր նշում եւ դասի ընթացքի հետեղականությունը: Մանրամասն պլան-կոնս-

պեկտներ նա ստիպված է կազմել միայն հատկապես զժվարթեմաների զմբքում, յերբ զասագրքում բացակայում է համապատասխան նյութը և այլն:

## 2. ԴԱՍԻ ԿՐԻՍՊԵԿՏ ԹԵՇԱ «ՅԱԴՈՒԽՆԻ ԿԱՌՈՒԽՎԱԾՔԻ»

Դասի նպատակը . տալ հասկացողություն ցողունի մասերի (կեղև, կամբիոն, բնափայտ, միջուկ) և նրանց նշանակության մասին բույսի կյանքում:

### Դասի պլանը

1. Ներածական դրույց (կազմ հախորդ թեմայի հետ և հազորդումը նոր թեմայի ուսումնասիրության նպատակի և պլանի մասին): 2. Ցողունի կառուցվածքը (լաբորատոր աշխատանք): 3. Ցողունների տնտեսական ոգտագործումը (զրոյց): 4. Մշակման արդյունքները (1 ժամ):

### Դասի բովանդակությունը

- Ներածական դրույց: Հարցեր անցած բաժնից:  
 ա. Ի՞նչ աշխատանք եւ կատարում տերեւը:  
 բ. Ինչպես եւ կատարվում սննդառությունն ողից:  
 գ. Ինչպիսի պայմաններ են հարկավոր ուղայի գոյացման համար տերեւում:  
 դ. Ինչպիսի են տերեւների մեջ թափանցում հանքային աղերն ու ջուրը:

Անցուն «ցողուն» թեմային (ուսուցչի բացատրությունը ցողունի նշանակության մասին): Ցողունը լայն սփռում եւ իր տերեւածածկ ճյուղերը և այդ նպաստում եւ այն բանին, վոր տերեւի մակերեսն ավելի լավ եւ լուսավորվում արելից: Տերեւներն այնպիս են դասավորված, վոր մեկը յուստին չի ծածկում: Բացի այդ, ցողունի միջակա գրությունը՝ ջուր կլանող արմատի և տերեւների միջև յուց եւ տալիս նրա գերը, վորպիս միջնորդ տերեւների ու արմատի միջև:

Կարեւոր եւ պարզել թե ցողունի վմբ մասերով են անցնում այդ նյութերը, իսկ դրա համար ամենից առաջ հարկավոր եւ անոթանալ ցողունի հիմնական մասերին:

Հետեւյալ թեմայի գրանցումը գրատախտակի վրա:

ՅՈՂՈՒՆ. ՍՆՆԴԱՏՈՒ ՆՅՈՒԹԵՐԻ ՇԱՐԺՈՒՄԸ ՅԵՎ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒՅՍԻ ՄԵԶ

I. Յողունի կառուցվածքը

Բացատրություն, թե ինչպիսի հատածն ե (տրամատ) կոչ-  
վում լայնակի, ինչպիսին—յերկայնակի:

Աշխատանքի կարգը. 1. Հավասար կտրեք ձեր ստա-  
ցած լուսնու, ուռենու, բարդենու ցողունի ծայրը և դիտեք այդ  
լայնակի կտրվածքում շերտերը: Քանին են շերտերը և ինչ  
գույնի յեն:

Արտաքին մուգ գույնի շերտը կոչվում է կեղե, ներքին  
սպիտակագույնը, կամ կիսամոնագույնը—միջուկ:

2. Փորձեք բնափայտից անջատել կեղեր: Արդյոք նա հեշտ  
է անջատվում: Փորձեք ուռենու բնափայտի և կեղեի միջև գլու-  
խվող հյութի համը: Այդ նյութը կեղեր բնափայտի հետ միաց-  
նող նուրբ շերտի—կամ թիռնի քայքայված բջիջներից ին-  
քնափայտի մեջ նկատելի յեն տարեկան շերտեր, վորոնց հետ  
դուք ավելի մանրամասն կծանոթանաք հետազայում: Հաշվեք  
ձեր ճյուղերի տարիքը տարեկան շերտերով:

3. Յողունը միջուկի ուղղությամբ յերկայնակի կտրելով,  
դանել ցողունի բոլոր մասերը յերկայնակի կտրվածքի վրա:

4. Նկարեք յերկայնակի և լայնակի կտրվածքները:

5. Յերկարությամբ կտրած ցողունից քորոցով դուրս քե-  
րեք միջուկը, (կտրեք նաև թանթրվենու ցողունը և դուրս քե-  
րեք նրանից միջուկը):

Չոր ե, թէ հյութալից նաև կարծր ե, թէ փափուկ համեռ  
մատեք կեղեից մաքրած բնափայտի հետ:

Պատահում են առանց միջուկի ծառեր:  
(Պատահում են: Միջուկը փտեց, փչակ գոյացավ, իսկ ծառն  
ապրում ե):

Արդյոք միջուկը ցողունի անհրաժեշտ մասն և հանդիսա-  
նում:

Իրանք ցողունի արդեն մեռած բջիջներն են, վորոնք բույ-  
սի կյանքում նշանակություն չունեն (դասատուի բացատրու-  
թյուն):

6. Վորոնք են բնափայտի հատկությունները: Ի՞նչ եք  
նկատում բնափայտը կորացնելիս, Համեմատեք բնափայտը կեղեի  
հետ: Կոտրվում ու արդյոք կեղեր կորացնելիս:

7. Կեղեի մակերեսը ծածկված է գերնամաշկով և խցանա-  
յին շերտով, վորը ցողունը պաշտպանում է չորանալուց: Խցա-  
նյային շերտի տակ կանաչ շերտն տուածնային կեղեն է, վո-  
րեց կազմվում են իցանային շերտի նոր բջիջները:

Առաջնային կեղեի տակ գտնվում է մանրաթելերից բաղ-  
կացած լուրը: Ձեր նկարի վրա նշեք արմատի մասերը:

Փորձեք լուրը պատռել յերկայնությամբ և լայնությամբ:  
Վեր ուղղությամբ և նա հեշտ պատռվում:

Թանթրվենու կտրորի վրա դիտեք նրա կեղեի մակերեսին  
յեղած բշտիկները: Դրանք—վոսսպիկներն են (չեչևիչկի):  
Նրանց միջով շնչառության համար հարկավոր ողը կարող է  
անցնել ցողունի մեջ: (Ձրի մեջ խորառությամբ ճյուղի մակերե-  
սից ողի պղպջակները արտադրելու փորձ, ճյուղի մեկ ծայրը  
ծածկված է մոռով, իսկ մյուս ծայրից ողի և ներփչվում): Գրան-  
ցում:

Կեղեվի վրա յեղած վոսպիկների միջով թափանցում  
և ցողունի շնչառության համար հարկավոր ողը

Խակ ինչ նշանակություն ունեն բնափայտը և լուրը:  
Նրանք ցողունին ատլիս են ամրություն և դիմացկանություն:

Դա ցողունի նշանակության լրիվ բնորոշումը չե գենես:  
Հետևյալ դասին մենք կծանոթանանք բնափայտի և լուրի մյուս  
պերին—սննդանյութերն անցկացնելու դերին:

Խակ այժմ ծանոթանանք ցողունի տնտեսական նշանակու-  
թյանը: Գրանցում:

II. Յողունների ոգտագործումը և նետառության մեջ

1. Ի՞նչ կիրառում ունի բնափայտը:

2. Ի՞նչի համար և ոգտագործվում լուրենու, կանեփի, կտա-  
վաթի և մյուս թելատու բույսերի լուրը:

3. Ի՞նչի համար է գործածվում կեղերը:

4. Թղթի, մետաքսի պատրաստումը յեղինու բնափայտից, խեժի, սկիպիտարի գուրս թորելը և այլն (դաստառի համառոտ բացարություն): Գրանցում:

Յողունի բոլոր մասերն ել լայն կիրառումն ունեն. բնափայտը—շինարարական գործում, թղթի արդյունաբերության, քիմիական արդյունաբերության մեջ և այլն, լուբը—տեքստիլ արդյունաբերության մեջ, կեղևը—կաշվի արդյունաբերության մեջ (գաբաղանյութ):

9. Մշակման արդյունքները: Յեղբափակման զրույց մշակվութիւն վերաբերյալ

Տնային առաջադրություն: Դասագիրք՝ Վսեսվայական պլակի, եղ՝ . . . . .

Ոժանդակներ աշխատանքի համար. բարդենու, լորենու, կաղնու, ուսենու, թաթրվենու ճյուղերի կտորներ, դաշնակ, բաժակ ջրով, քորոց, լուպա (խոշորացույց):

### 3. ՊՏԵՐԱՆՄԱՆՆԵՐ

#### Դասի անցկացման պլան

Դասի համար անհրաժեշտ նյութը. Հերբարային նմուշներ՝ պտերի, ձիաձետի, (գարնանային և ամառային ընձյուղներ), գետնամուշի, պտերի նախածիլի (չորացրած կամ կենդանի), մասամբ ծլած:

Դիտույքներ. պտերի, ձիաձետի և գետնամուշի նկարը ներով աղյուսակներ: Աղյուսակները, վորոնց վրա խիստ մեծացը ձեռվ պատկերված լինեն սորուսը, սպորանգիումը, սպորը, ձիաձետի հասկիկի, սպորանգիումի և սպորի կառուցվածքը, գետնամուշի սպորանգիումը և սպորները: Բարածխային շրջանի լանդշաֆտը (պատի նկար, դիապոզիտի լիները, կամ գրքի նկարներ նպիգուսկոպի համար): Բրածո պտերների, կալամիտների, լեպիտեկիցիա:

Բարածխի նմուշներ (անտրացիտ և գորշ ածուխ):

#### Դասի բովանդակությունը

1. Պտերներ: Պտերի եկոլոգիան: Պտերի հարմարվելը գոյության պայմաններին խոնավ ստվերաշատ անտառներում:

Պտերի մորֆոլոգիան: Կոճղարմատ և արմատներ: Փոխադրող անոթներ կրծղարմատի, արմատների և տերենների մեջ: Տերեն կառուցվածքի ձևը, կառուցվածքը և առանձնահատկությունները:

Պտերի զարգացումը: Նրա «ծաղկումը»: Սորուներ: Սպորանգիումներ և սպորներ: Սպորների ծլումը և նախածիլի զարգացումը: Բազմացման որգանները և բեղմնավորության պայմանները: Մատղաշ պտերի զարգացումը:

Լաբորատոր աշխատանքը պտերների վերաբերյալ աշխատանքը: Հերբարային որինակների դիտում. արմատներ, կոճղարմատներ, տերեններ, սորուների դիտումը խոշորացույցով, դիտել խոշորացույցով պտերի նախածիլի և մատղաշ ծլերը: Ծիւզոյիններ նախածիլի վրա:

2. Ձիաձետներ: Դիաձային պտերի բնակավայրը և բիոլոգիան, գարնանային և ամառային ընձյուղները, նրանց բնորոշ հատկանիշները:

Կոճղարմատ և արմատներ: Ձիաձետի բազմացումը, հասկիկի, սպորանգիումներ և սպորներ: Ձիաձետի նախածիլերը և բեղմնավորման պայմանները:

Լաբորատոր աշխատանքը ձիաձետների վերաբերյալ: Դիտել դիտել նկարել հերբարային նմուշները: Արմատ, կոճղարմատ, տերեններ, սորուների դիտումը խոշորացույցով: Պտերի նախածիլերի և մատղաշ ծլերի դիտումը խոշորացույցով: Ծիւզոյինները նախածիլի վրա:

3. Գետնամուշիներ: Գետնամուշի կավավայրը: Գետնամուշի կառուցվածքն ու զարգացումը, արմատներ, ցողուն, հասկիկներ: Սպորանգիումներ և սպորներ: Գետնամուշի կավավայրը և բեղմնավորման պայմանները:

Լաբորատոր աշխատանք գետնամուշի գետնամուշիների վերաբերյալ: Գետնամուշի կավավայրի դիտում: Հասկիկի և սպորանգիումի կառուցվածքը:

Տեղաբակման զրույց, Պտերների, ձիաձետների և գետնամուշի կավավայրի կառուցվածքի և բարգացման վերաբերյալ մը:

շակածի ամփոփումը: Զնայած պտերների, ձիածետների և գետանամուշկերի արտաքին կառուցվածքի տարբերությանը, նրանց մեջ կա շատ նմանություն, —արմատներում և ցողուններում առնոթային սիստեմի առկայություն, բազմացման յեղանակը քառամու միջոցով տարածվող սպորների միջոցով, սպորակիր սերնդի և նախածիլի հաջորդականությունը, սեռական որգանների՝ արշխեգոնիումների և անթերիդիումների կառուցվածքի նմանությունը:

Յեղակացություն. Պտերները, ձիածետները և գետանամուշկերը կարելի յե նամախմբել մեկ տիպի մեջ՝ պտերանմանների տիպի մեջ, վորոնք ծաղկավոր բույսերից տարբերվում են ծաղիկների, պտուղների և սերմերի բացակայությամբ:

Պտերանմաններն անցյալում: Պտերանման ֆլորայի վաղեմիությունը: Ծառանման ձիածետների և գետնամուշկերի գոյությունը ունենալի անցյալում: Ծառանման պտերների պահպանումը մինչև մեր որերը: Պալեոնտոլոգիական կոլեկցիայի ցուցադրում:

Քարածխային շրջանի կլիման և քարածխային անտառի ընույթը, լանդշաֆտի ցուցադրում: Քարածխի գոյացման պայմանները: Քարածուխների կոլեկցիա: Քարածխի մեջ կուտակված եներգիայի ոգտագործումն արդի արդյունաբերության մեջ:

Պտերանմանների ծագումը: Պտերանմանների մուտիկ լինելը մամուռներին: Ցերկուսն ել բազմանում են սպորներով և ունեն արխեգոնիումներ և անտերիդիումներ: Բայց միենույն ժամանակ, մամուռներն իրենց կառուցվածքով պտերանմաններից զգալիորեն պարզ են և հարմարված են գոյության ավելի խոնավ պայմանների: Հետևաբար պտերանմանները մամուռներից տուած են անցել գոյության ցամաքային պայմաններին հարմարվելու ուղիով: պտերանմաններն ունեն արմատներ, անոթային սիստեմ, տերևների, ցողունի ծածկութային հյուսվածքի և այլ ավելի բարդ կառուցվածք, քան մամուռները:


Պտերանմանները և մամուռները ջրիմուռներից, տարբերվում են ավելի բարդ կառուցված սեռական որգաններով (համեմատել արխեգոնիումը ողօնիումի հետ), ջրից դուրս կյանքի պայմաններին հարմարվելու ունակությամբ, մանավանդ պտե-

րանմանները (մարմի մասնատումն արմատների, կոճղարմատների, ցողունների, տերևների վորոնք բացակայում են ջրիմուռների մոտ):

Միենույն ժամանակ պտերանմանները նախածիլի շրջանում պահպանել են ջրիմուռների նման մի քանի գծեր (ոփղոյիդներ, տալլամի չմանատված լինելը, բեղմնավորության պրոցեսում ջրի առկայության անհրաժեշտությունը):

Ջրիմուռների հետ ունեցած այդ նմանությունն ել ավելի խիստ արտահայտված ե մամուռի վրա, նրա նախածիլի ստադիայում, յերբ հիշեցնում և թելային ջրիմուռի:

Յ զ ր ա կ ա ց ություն. Այսպիսով մամուռները և պտերանմաններն առաջացել են ջրիմուռներից, ըստ վորում պտերանմանները կառուցվածքով և զարգացմանը ավելի բարձր են, քան մամուռները: Այս յեղբակացությունը կարելի յե ավելի պարզ պատկերացնել բույսերի տիպերի զարգացման հետևյալ պարզեցված սխեմայով:



II. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ ԲՈՒԽԱԲԱՇ  
ՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԼԵՆԹԱՅԻՑ V ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

1. ԿԵՆԴԱԲԻ ՑՅՈՒՔ

Յեղիպտացյորեն: Կարտոֆիլ (բույսը պալարներով): Սեղ՝ կոճղարմատով: Խուլ յեղին՝ կոճղարմատով: Սոխ: Յեղնձամայր, ջղախոտ (գառնալեղով) — 20 հտ.: Խառուտիկ (20 հտ.). գոնզեղ (շաղամ), ճակնդեղ, գաղար—ամբողջական բույսերով: Երդիմա (կամ վալիսներիում): Մնիում: Կոճղարմատներ, խառուտիկի արմատները տեղափորվում են հողով արկղներում, պալարներն ու կոճղեղները ձմեռային պարապմունքների համար թողնվում են չոր ու զով տեղում:

Լորու, սիսենի, յեղիպտացյորենի, բրնձի, վարսակի, վուշի, կտավատի, արևածաղկի, կեղրա, ընկույզների, շամու, յեղնենու սերմեր:

Փաթեթներ (20) սերմերի և պառուղների հավաքածույով: — լորի, սիսեռ, տարեկան, ցորեն, գարի, վարսակ, յեղիպտացյորեն, արինջ, խրպուկ, վիկ, արևածաղիկ, վուշ, գաղար, կաղամբ, մանաների, տերեփուկ, վորում: Սերմերի սորտեր՝ ցորենի, յեղիպտացյորենի, լորու, արևածաղկի:

Ժանդառի յեղջյուրիկներ, ջրոսպ, փիկուս, կակտուս, ալույն, ազավա, պատիրուս, ֆիլոդենդրոն, ծներեկ, խորդենի, բերգոնիա, գարնանածաղիկ, տրագեսկանցիա, պլեկտոգինա, կլիվիա, փուքսիա:

Ուսենու, բարդու, կեչու, կաղնու, շագանակի, թանթրվենու ձյուղեր (բողբոջներով): Դիացինտի կոճղեղ, կարտոֆիլի պալարներ, հաղարջնու վոստեր:

Ծաղկող լաստենի, կեչի, ուսենի, պնդուկենի: Կարմիր կաղամբ (գլուխը): Սերմնապարկեր՝ կոտամբի, շաղգամի:

Փնջիկ (խօլատկա) (պալարները): Պուտ (ծափկոտրուկ, կոճղարմատը): Տատասկ (արմատները): Փամփշտիկի ձմեռող բողբոջներ:

2. ՀԵՐԲԱՐԻՈՒՄ յեվ չորացրած ու սպիրտում պահված ցյուք՝ բաժանելու համար

Կենափ: Սոյա՝ պառուղներով: Բամբակ կնդուղներով և առանձին կնդուղներ (20 հտ.): Յեղիպտացյորեն հասկերով: Տառւ-

սագըգ: Գվայուլա: Ցորենի և վարսակի սորտեր պստիկ խրձեսրով: Յարովիլպացիոյի յենթարկած և չյենթարկած կորեկ: Վարսակի հասկեր՝ փոշեանկով վարսակված (20 հտ.) և առողջ (20 հտ.): Դարու հասկեր՝ փոշեանկով վարսակված (20 հտ.) և առողջ (20 հտ.): Տարեկանի հասկեր՝ ժանդառով (20 հտ.): Խտուտիկ արմատներով (20 հտ.): Մատղաշ յեղիպտացյորեն՝ արմատներով (20 հտ.): Ճանճային շամի: Ավաղում աճած շամի: Ցաղալասի: Վարունդներ (խիլղեր, թիլիր, պլետի): Միսիո, ճյուղ՝ տերհներով:

Ետիրացրած բույսեր:

Նույն բույսերը լույսի տակ աճած:

Հովտաշուշանի, լորենու, թղկու տերեներ (20 հտ.): Տերենների և տերեններով ճյուղերի պաշար հեակյալ բույսերի՝ շամու, հացազգիների, հովտաշուշանի, նստառըցիայի, կեչու, գայլաթառթի (մանյետկա), նետախոտի (նետախոր, ստրոլուս), յեղբեկանու (շեփորուկի), ծոթորու (բուրա), թղկու, կազնու գաժան գորտնուկի, խտուալիկի, յերեքնուկի, սնձնենու, ակացիայի, շամանակի, այծախոտի: Այծախոտի, ասպիրակի (տավոլգա) տերեկի զարգացումը: Բույսեր՝ տերենների հերթական, փնջային, իրարդիմաց գասավորաթյամբ: Մոզայիկա՝ թղկու, սնձնենու, լորենու և այլն: Ռողետկան՝ խտուտիկի, ջղախոտի և այլն: Շնախազողի, փշատենու տերեններ: Բոլթրատերի գանգակիկ աճած ստվերային և լույս տեղերում:

Փովող, փաթաթվող, կառչող ցողունների նմուշներ, ծղոտի ցողուններ: Դետնամորու բեղիկներ: Հովտաշուշանի, բոշխի կոճղարմատ: Ալոճի, ցոպտիկի և ձորենու փշավոր ճյուղեր (ճյուղեր տերեններով): Զանագան բույսերի ծաղիկներ և ծաղկափթթյուններ (չորացրած և ապիրատում պահված):

Պտուղներ՝ հացազգիների, արևածաղկի, ընկույզի, գորտնուկի, վուկեծաղկի, սիսեռի, վիկի, ակացիայի, շնկոտեմի, գոնզեղի, կաղամբի, մանանեիի, խաշխաշի, մոլիխինողի (չորացրած): Հատապտուղներ, կորիկավոր պառուղներ, վարունգ, մորի, գետնամորի, (սոլիբրտում պահված): Պտուղներ՝ խտուտիկի, թղկու տատասկափշի, ծփու, փետրախոտի, գաղարի, գրավիլատի, կատվիլեղի (րոպենիկ):

Սպիրակ շուշանի (բելայ կվամակա) հաղիկներ (սպիրտում պահած): Սպիրակ շուշանի պատկամերթիկների հերթարիում



(պատկաթերթերի անցումն առեջքի): Վերին և սոսրին սերմատարաններով ծաղիկները: Կտուվատ, կանեփ, ծաղկման և հասունացած վիճակում (խրձիկներով): Տերեների կմախքներ՝ կեչու, թղկու, կաղնու, և այլն, տպակու տակ կանոնվկա անելու համար: Սպիրտի մեջ նախորոք պատրաստված տերեներ՝ ածխածնի յուրացումը և ոսլայի գոյցացումը ցուցազրելու համար:

Թղկու և ուր. չոր տերեներ (քլորոֆիլ ստանալու համար):

Տարբեր ծառատեսակների ցողունների կտրվածքներ՝ շամու, յեղնու, կեչու, թխնու, կաղմախու, կաղնու և այլն: Այդ տեսակներից պատրաստած տախտակի կտորներ\*):

### 3. Միկրոսկոպային պրեզարվաներ

Լորու և սիսուի շաքիլների բջիջներ: Արմատի լայնակի կտրվածք: Արմատի յերկայնակի կտրվածք: Արմատամաղիկներ: Տերենի լայնակի կտրվածք: Յեղիպատացորենի, գոռումի, ցողունի, յեռամյա լորենու ձյուղի, դդումի ցողունի յերկայնակի կտրը

\*) Խըպագր. միւրուշյալ ցուցակներում բերված բույսերի խոչոր մասը, կարելի յե հավաքել աշակերտների ողնությամբ: Բնագետ-գասատուի տշիտատների կարեսը սպակներից մեկն և նաև սովորեցնել աշակերտներին ուսումնասիրել բնությունը, բնական որյակտները, վոչ միայն դիտելով, այլև հավաքելով և կոլեկցիաներ կազմելով: Բուռարանական տարբեր ոբյեկտների հավաքման գործն էլ պիտի կատարվի փորոշ պլանով: Կաղ զում են կոլեկցիաներ, որինակ՝ մոլախոտերի, մեղրատու բույսերի, գեղարույների և այլն: Շատ կարեսը և ուսումնասիրել ով յաջ վայրի գեղ ու յաները, բնականաբար դրսոցը կոնհնա համապատասխան կուեկցիա՝ հավաքված և կաղմած աշակերտների կողմից:

Թվինք մի շաբը գեղարույներ,— անանուխ, արջընկույզ, թյուրինջիստ (մելիսսա), յեղիսպակ, ալրաշրուկ կամ կոտիվախոտ (բաւրիսա), խնկածաղիկ (մայորա), մամոնոցուկ (ապերտին ա), խաշնողի (քըշեն), յերիցուկ (լվածաղիկ), բարձմենել (լովշան—ուսկի), մոլեխինդ (բանդի—ծելենա), հաղարակուսկ, տիղկանեփ, (գենեգերչակ—ռաւշենա), խոշխաշ, տուզա, մատուտուկ (լակրիզ), բեկախնե (ալաժահիր—կրասիվա), հովաշուշան, կաղոնի, արջախաղող, չաման (րման), հապալամի (չերնիկա), շնալապող (ճելլա-ճօնա), մոլեխինդ, մանանեխ, լոբի, թանթրիկներ, անիսոն (սան), գիճի: Հատուկան գեղարույների մասին (նրանց հավաքման մասին) կարելի յե առաջարկել հայերեն՝ կաւաշ բն ի կա՞ ինչո՞ն ուետք ե հալաքել զեղարույները. Պետհան 1934 թ.: Թարգմանչի կողմից կան լրայնեներ Հայաստանի վերաբերյալ:

վածք: Բջիջի բաժանումը: Յողունի աճման կետը: Կարտոֆիլի պալարի կտրվածք: Զանազան բույսերի ծաղկեփոշի: Սերմնաշրանի և վարանդի փոշեպարկի կտրվածք:

### 4. Դիտապոզիտիվներ (կամ աղյուսակներ)

Վայրի և կուլտուրական կաղամբ, գողար: Տեսակավորիչ— «Տրիումֆ»: Տրիեր, քամհար: Մեքենաներ չոր և թաց ախտահամարն համար: Դիտապոզիտիվները յարովիրացիայի վերաբերյալ կուլտուրական բույսերի սորտեր: Ջրոսպ: Տարբեր պարարտանյութերից գործադրման արդյունքները՝ ջրային կուլտուրաների վրա կատարած փորձերի արդյունքները Արմատի, ցողունի (միաշաբի և յերկայնակի բույսեր): լայնակի և յերկայնակի կտրվածք: Արմատի ծայրը (միկրոսկոպի տակ): բազմուգաշտություն:

Հողի մշակման գործիքներ: Բույսերի աճեցումը արհեստական լուսավորության տակ: Կակտուսներ: Յերաշտային շրջանների բուսականությունը, յերաշտի զեմ պայցարելու միջացները (զիտապոզիտիվների սերիա): Խնձորենիների պատվաստում (տարբեր յեղանակներ): Տերենի լայնակի կտրվածք: Զերմոցներ (ներքին կառուցվածքը և արտաքին տեսքը): Ֆոտոպերիոզիդմի փորձեր: Մաղկի կառուցվածքի սխեման: Պակի, փոշանոթների, վարսանգների, ծաղկեփոշու ձեր: Բեղմնավորժան պրոցեսը: Բույսերի ունեցած հարմարանքները խաչաձև փաշումները: Համար (յեղեսպակ, գարնանածաղիկ և այլն): Պտուղների սորտեր (Միջուրինի պարտեզից):

Աղհեստական փոշուում: Աղեկատիկ («օրօնք») (բույսն անձրկի տակ), ջրի հոսումը տերեների վրայից զեպի արմատները):

Առլայի հտափկներ— նորմալ և դիտուտաղով քայքայված, աղատ տեղերում և անտառում աճուծ բույսեր (կրտֆալ զտոկը— կլասս): Ելեմտորը:

### Այլ պիտույքներ

Պրիբոր ծլունակությունը զորոշելու համար:

Կլինոստատ: Պարարանայութերի հավաքածու: Արմատների կողմից քայքայված կրտքարի կտրը: Փոքր մադր կուսառու կամերա: Սենյակային ջերմացածու (պարնիկ): Հերմոց: Արկղներ ցանքսերի հտամար: Հողի ծնցուղ:

## 5. Ոժանդակներ բույսերի սիստեմատիկայի վերաբերյալ

ա. Մինիմալ աղյուսակներ սփռեմատիկայի վերաբերյալ

Բակտերիաներ, միաբջիջ ջրիմուռներ (կանաչ և դիատոմացին), թիւլոր ջրիմուռներ զսոսպորաներով և սեռական որգաններով, ծովային ջրիմուռներ, բորբոսասունկերի միցելիումներ և սպորանգիումներ, պարագիտային սունկերի զարգացման ցիկլը (յեղջերասունկ), միկրո, ժանգասունկ), բազիդիալ և պարկազոր սունկի կառուցվածքը, քարաքոսի կառուցվածքը, լյարդամուռնի և կկույի կոսավատի կառուցվածքն ու բազմացումը, պուրիի նախածիլը, սորուսները և սպորանգիումները, ձիաձետի և գետնաշմուշկի կառուցվածքը, շամու բազմացումը, ծածկասերմերի ամենաշղթավոր ընտանիքների ծաղկեների նկարներն ու դիագրամները, արխեգոնիատների սերունդների հաջորդականության սիմմա, վերյերկրային բուսականության զարգացման սիմմա, գեղողիական երաների և ժամանակաշրջանների աղյուսակները, բրածո բույսերի պատկերները

բ. Կենդանի ձեռվ ոգտագործվող մատերիալներ

Բակտերիաների կուլտուրա — Աղյոի թրմաջուր, սիսեռի կճեպի թրմաջուր, ողի միկրոօրգանիզմների կուլտուրա ագարագործի վրա (բակտերիաներ և բորբոսասունկեր):

Կապտականաչ ջրիմուռներ — Ռոցիլորիա (շարժման դիմումը):

Դիմացային ջրիմուռներ — Մատերիալ գետային պլանտոնից և տիղմից (պիննուլորիա, մելոզիրա և այլն):

Կանաչ գույնի ջրիմուռներ — Խրամբումունազա (կանգնած ջրավազաններից), պլեուրոկոկի (ծառերի կեղերի վրա), վոլֆրա, սպիրոգիրա, ուլուրոլորիա, վուշերի:

Սունկեր. — Ալիլիայի կամ սուլորիկների կուլտուրա միջամաների փոռագիտականության մեջության մատերիալ գիտական մեջության մատերիալ (գույնագույն սունկերի կուլտուրան աղբի կամ հացի վրա, կանաչ բորբոսասունկի կուլտուրա մատերիալ կամ հացի վրա):

առերա. Ամառը և աշնանը՝ անտառային սունկեր (խոզովակաչներ և ծալքավոր), անձրիտունկի: Փոշիսունկի ծյուղ սպորներ (ջրում):

Մամուռներ. — Մամուռի նախածիլի կուլտուրա. Մինում, սփագնում տորֆամանում (պահպատ և ապակե ծածկոցի տակ):

Պտերանմաններ. — Պտերների նախածիլի զարգացման տարրեր ստաղիաներում (ծածկոցի տակ, ավաղի վրա), սենյակային և վայրի աճող պտերներ, սոլիֆինիա (ակվարիումների մեջ), սելագինելլա (որանժեսերեաներում կամ ծածկոցի տակ): Գարնունը — ծիածետներ հատկիկներով և պառզուներով:

Մերկտուներ մեր. — Ասեղնատիրեների ճյուղեր (շամի, կուենի (պիչտ), կեզր, ցրգինի, բուրտնոմ (Եյր):

Սենյակային բույսեր. — Խորզենի, գարնանածաղիկ, գուրսիա, փիլոկակուս, կլիփիա, կրինում և այլն:

Վայրի տակ աճող բույսեր. — Տարբեր ընտանիքների ներկայացուցիչներ ծաղկման ստաղիայում (ընտանիքների թվարկումը բերված և չոր մատերիալի ցուցակում):

գ. Բաժանելու համար չոր մատերիալ

Լորձնասունկի սոլորներ. Տրեպել: Ֆիտոֆարայով վարակված կարտոֆիլի տերեներ. յեղջերասունկի սկրիոցիաներ: Մրիկով (փոշու և թայ) և յեղջերասունկով (ուռիզու — և տելիյասուղոր) վարակված հացաղիքներ:

Կծոնուրի տերեներ՝ եցիքիաներով: Ծառասունկերի (ԵՐԵՎԱԿ) տարբեր տեսակներ: Քարաքոսներ (պիլտիգերա, կոանարիա, ապոտեցիաներով): Մամուռ — կկուի կտավատ (կանաչ բույսը և սպորոլորներ): Մամուռ — փունարիայի սոլորոգներ: Պտերի վայր (ՎԱՅԻ) սորուսներով: «Զայլամի փետուրի» կանաչ տերեներ (ՎԱՅԻ) և սպորոփիլներ: Զիածետի հասկիկներ՝ թափվող սպորներով: Գետնամուշկերի հասկիկներ: Տարբեր ասեղնատիրեների հասունացած կոներ (ՇԻՇԿԻ): Միթրյան կեզրի սիրենը (ընկույզներ):

Աճը ողջական չորաց բաժաներ՝ ծաղիկներով (ծաղկաթթություններով) և պառագներով ըստ լուսաների:

1) Գորտնուրի կտերին և լեռագույն և լեռագույն պատճենագույն գույնագույն սունկեր:

- 2) Արևի աղջուկ կամ բներ, — վարոսի, պատղաժաղիկ (Յանձնական):
- 3) Խոչշած աղջուկ ներ, — Մանանելո, հովվաժախախ, դոնդել, շինկում:
- 4) Վարդաղ պիներ՝ կը ճիկախոտ (գրավիլատ), մատնունի, գետամորի, մասրենու, խնձորենու, թխենու ճյուղեր:
- 5) Թիթեռնած աղջուկ ներ, — Վարոսն, յերեքնուկ, իշառալոյտ:
- 6) Հովանաց աղջուկ ներ, — Վայրի ստեղին (բօրքեվիկ) ինդամոլի, չաման (ՏՄԻՒ):
- 7) Շրինած աղջուկ ներ, — Յեղեսպակ, յեղնձամայր, ծոթորի (բուճրա), հանկիստ (живуцка):
- 8) Բարդած աղջուկ ներ, — Լոտուտիկ, արհածաղիկ, բլածաղիկ:
- 9) Ուռինիների ընտանիք, — Ուռենի, բարդի (ճյուղեր իգական և արտկան ծաղկափթթություններով):
- 10) Արինձաղիներ, — Արինձ, թրժնջուկ:
- 11) Շուշանաղիներ, — Հովտաշուշան, սագասոխ:
- 12) Բոշխերի ընտանիք, — Բոշխ:
- 13) Խոտաղիներ, — (զակօնե), — Տարեկան, ցորեն (սորտեր), զարի, վարսակ, կորեկ, յեղիպտացարեն, սեղ, խրացակ, զաշտուլուտ, աղջևատի, զաշուի ֆինոն, փշախոտ:
- Պառաղիներ և սերմեր (համեկեր) կուլտուրական բույսերի տարեկան, ցորենի սորտեր, գարի, վարսակ, կորեկ, յեղիպտացոլին (սորտեր), կտավատ, կանեփ, արևածաղիկ, արինձ, խաշել այլն:
- Դ. Սակիթային մատերիալ՝ բաժանելու համար
- Նոսակ, սիմուլյարիա, սպիրոգիրա (բազմացման ստացում), ուլոտրիքս, վոշերիա (սոգոնիաներով և անտերիդիաներով), ֆուկուս, լամինարիա — ծովային՝ կաղամացիա, մուգիարմիր ջրիմունիք, կողամբի արմատներ՝ կիլայով վարակված։ Միքրո-
- մեկանիկամիան ունցիներ՝ Մորի (սուսի) (պատղամարմին), Պեցիցա (նույնական), Ժանդառունիկի եցիդիաներ տերեների վրա (կտրվածքների համար), Անտառային սունկերի պատղամարմիններ, Կկույի

կտավատի սպորտոններ, Մարշանցիայի գամեատեցիաներ։ Նրա բողբջնիները Պակերի հափամածիլեր (սպիրոգիրած և չուացրած), Պակերի կոնդարմատներ (կտրվածքի համար), Զիտանետի համեկիկներ (հերձաւան համար), «Եկեղեղողիում» և «սելազինելլա» գետնամուշիկի համեկիկներ։ Շամու և այլ իգական ու արական համեկիկներ։ Ծածկասերմ բույսերի (նախորդ ցուցակում թվարկած) ծաղիկներ և ծաղկափթթություններ։

Տեսակի, ցեղի և ընտանիքի հասկացողությունների լուսաբանման համար — թիթեռնածաղիկների ընտանիքից մատերիալի կոմպլեկտներ (չոր և սպիրոտային):

Վոլոսն, յերեքնուկ, վիկ, արվույտ, իշտուվույտ։ Յերեքնուսկի տեսակներ, — մարգագետնային, ցվեղական, սողացող, գաշտային, լեռնային։

Տաքսոնոմիալի համեկացողությունները կարելի յե նույնականացների լուսաբանել վարդածաղիկների ընտանիքի ներկայացուցիչների վրա։

#### յի. Հերբարիում

1. Սիստեմատիկան հերբարիում ըստ հատուկությունների։ Օրինակներ։ Սունկեր։ Քարաքոսներ։ Մամուններ։ Պուրանմաններ։ Մերկասիերներ։ ծածկասերմեր (ըստ ընտանիքների):

2. Թեմատիկան հերբարիում։ Հատիկային կուլտուրաների սորտեր (հացալդիներ, չնողկացորեն, սիսեռ և այլն), Բանջարանոցային կուլտուրաներ։ Տեխնիկական կուլտուրաներ (կտավատ, կանեփ, ծխախոս, արեածաղիկ, զարակաբույսեր և այլն), կերպախոտեր և սիլոսային բույսեր։ Մարգային խոտեր։ Մոլախոտեր (նույն թվում և թունավորները), Դեղաբույսեր։ Մեղրաբույսեր։ Ծառային և թփային տեսակներ։ Պարագիտներ, կիսապարագիտներ, միջամտակեր բույսեր։

#### 6. Այլ պիտույներ

Գործիքների հավաքածու յուրաքանչյուր խմբի և յուրաքանչյուր սովորողի համար՝ ձեռային լուբրիտուոր սարապմունքների և ձմեռային պրակտիկայի համար։ Մեղոնի լուսապատճենների պատճենագիրը կամաց առաջնային է այս պատճենագիրը։

պաներ: Ծալովի գրպանի լուսավ: Հերձելու ասեղներ: Ածելի  
և թանթրվենու միջուկ: Նշոտը (սկալպիլ) կամ դրապանի դանակ:  
Պինցետ: Պրալետկա: Հախճապակի թասեր: Առարկայական և ծած-  
կող ապակիներ: Մամուլ բույսերը չորացնելու համար (կաշվե կա-  
պով): Բուսաբանական թիմակ («փորիչ»): Բույսեր հավաքելու  
պատկա և թղթի պաշար: Նյութի բանկաներ՝ խցաններով: Խիտ  
թուղթ հերբարիումի համար: Հերբարային պիտակներ, նյութերի  
պիտուկների բանկներ: Սոսինձ և վրձին: Ծրաբներ, տուփեր չոր  
մատերիալ հավաքելու համար:

Ամենալիավոր հատիկավորների, բանջարանցային, կե-  
րային և տեխնիկական կուլտուրաների հերբարիումներ, մոլախո-  
տերի հերբարիումներ, կուլտուրական բույսերի հիվանդություն-  
ների հերբարիումներ: Հատիկային կուլտուրաների վերաբերյալ  
անհրաժեշտ ե ունենալ կարելորդույն նորաերի կոլեցիա (հաս-  
կեր և սերմեր). Ճի կարելի սահմանափակվել միայն տեղական  
բույսերով, անհրաժեշտ ե ունենալ այլ շրջանների կարելորդույն  
անդատու տեխնիկական կուլտուրաների կոլեցիա (յեղիպ-  
տացորեն, արինձ, կորեկ, սոյա, կինաֆ, քենզիր, գենագերչակ, առ-  
քածաղիկ, բրինձ և այլն): Այդպիսի մատերիալ կարելի յի  
սահման համապատասխան շրջանների ուսումնական հիմնարկնե-  
րի հետ փոխանակություն կատարելով:

Բացի կուլտուրական բույսերից կաբինետը պետք ե ունե-  
նա ոչտակար վայրի առող բույսերի (մարգագետնային, գեղա-  
տու, մեղրատու, հատապտղատու և այլ բույսերի) կոլեցիաներ:

Անհրաժեշտ են նաև մատերիալներ, վորոնք կպատկերելին  
բուսաբուժության, պողաբուժության բնագավառի նվաճումները,  
մեր գիտա-հետազոտական հիմնարկների և ի. Վ. Միջուրինի նը-  
վաճումները:

Բնագիտության կարինեառաք պետք ե լինի նաև փոքրիկ  
գրադարան բուսաբանության և բուսաբուժության վերաբերյալ  
5-րդ և 6-րդ գասարանների աշակերտների համար մատչելի գրա-  
կանություն: (Որինակ՝ Բելյաև.—Կաк վыводятся новые  
породы растений и животных. Покровский.—Изобрета-  
тели растений. Бахарев.—В мастерской растений.

Հայերեն.—Ռ. Քարոբելյան,—իվան Միջուրին և Լու-  
տեր Բերբանկ: Յափունջյան.—իվան Միջուրին):

### III. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԲՈՒՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԲՈ.Ժ.Ն Ա.Վ.Ա.ՆԴՐԱՆ ՀԱ.ՄԱՐ

Վահագյառակի — Բուսաբանություն.

Ստարիլ գասագիրք, վորը համապատասխանում ե միջնա-  
կարգ գպրոցի բուսաբանության ծրագրին: Դասադրքում բավա-  
կան լրիվ ցույց են տրված բուսաբանության խնդիրները ու-  
ցիալիստական բուսաբուժության բնագավառում, լուսաբանված  
են գիտության վերջին նվաճումները բուսական որգանիզմի զե-  
կավարման գործում:

Գրքի թերությունն ե — մի քիչ չոր և հաճախ կոնսպեկտիվ  
շարադրումը: Կան բաժիններ (յարովիզացիա, պարուտանյութե-  
րի տեսակները, լույսի և քլորոֆիլի գերը ուղայի առաջացման  
մեջ), վորոնց բովանդակությունը դժվար և 5-րդ զանարանի  
սովորողների յուրացման համար:

Боровицкий և այլք.—Биология растений.

Ягодовский.—Живой уголок в школе и дома.

Остергаут.—Жизнь растений в опытах.

Դասատուի համար արթեքավոր գիրք, վոր պարունակում է  
մի շարք պրակտիկ ցուցումներ փորձերի զրածքի մասին, այդ  
մեծ չափով հեշտացնում ե պարապմունքներին նախապատրաստ-  
վելու աշխատանքը: Փորձերն որիգինալ են, կան և ինքնաշեն  
պրիբորներ սարքելու ցուցումներ:

Исаин В. П., К руководству к практическим занятиям по физиологии растений.

Вальтер С. и Пинкевич Я.—Краткий практический курс физиологии растений.

Полянский И. И.—Опыты по физиологии растений в природе.

Натали Н. Ф.—Животные и растения в уголках живой природы.

Արարատյան և Զերբարիում:

Ռ. Քարոբելյան—Պատանի բնասերների խմբակ:

Խմբ, Բույսերի անհնաների նկատմամբ դժբախտաբար գեռ միորինա-  
կություն չկա: Այդ անհնաների վերջնական ճշումն ի հարկե շատ կարելու և  
անհրաժեշտ գործ ե, վորի ուղղությամբ աշխատանքներ կատարվում են: Այդ

ուղղությամբ արժեքավոր նյութ են հանդիսանում: Քօռօ Յ.—Դյուրաստյան  
քաղաքացիակություն), վրատեղ բերված են կովկասյան  
մի շարք ազգությունների (նաև հայերի) բուսաբանական անունները. բացի  
այդ արվում են բույսի վերաբերյալ (նրանց սպառակարության ուղղությամբ)՝  
տեղեկություններ: Հայկական անունների հշաման տեսակետից կոդնեն նաև  
Ալիշանի—«Հայրուսակը»-ը:

## Բ. ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

### I. ԴԱՍԻ ՊԼԱՆ—ԿՈՆՍՊԵԿՏ

Դասարան 6-րդ, 20-րդ դպրոց Վոլոդարսկու ուսումնական դպրոցի, Լենինգրադ

Դասի թեմա. Միջատի ներքին կառուցվածքը (խավարաւուների հերձումը)—2 ժամ:

Դասի տեղը աշխատանքի պլանում. Յերկրորդ  
դասը օչողվածուանին եր՝ թեմայից:

Աշխատանքի մեթոդը. Լաբորատոր պարապմունքներ  
դասատուի բացատրություններով:

#### Դասի պլանը

1. Միջատի արտաքին կառուցվածքի վերաբերյալ նախորդ  
դասին մշակվածի կրկնություն:

2. Դասատուի հրահանգը միջատ հերձելու տեխնիկայի մասին:

3. Ընդհանուր համառոտ տեսություն միջատի ներքին որ-  
գանների:

4. Միջատի (սև խավարաւուների) ինքնուրույն հերձումը ա-  
շակերտների կողմից:

5. Միջատների որգանների և ֆունկցիաների ուսումնասի-  
րությունը. Դիտումը և նկարելը ափառում, դասատուի նախնական  
բացատրությունով:

6. Հանրագումարի բերելը, համառոտ կրկնություն, յու-  
րացման ստուգում, աշխատանքի հիմնական մոմենտների պը-  
րանցումը տեսրում:

#### Դասի ընթացքը

ա). Նախորդ դասին անցածի կրկնությունում ու-  
գում (միջատի արտաքին կառուցվածքը) բանավոր հար-  
ցումի ձեռնի:

Տրվում են հետեւյալ հարցերը—

1. Կենդանիների ինչպիսի տիպ մենք սկսեցինք ուսում-  
նասիրել անցյալ դասին:

2. Ի՞նչ կենդանիների մենք դիտեցինք:

3. Հոգվածուանիների տիպից վեր դասին եյին պատկա-  
նում ձեր տեսած կենդանիները:

4. Քանի և հատկապես ինչպիսի մասերի յև բաժանվում  
խավարաւուների մարդինը:

5. Ի՞նչպիսի որգաններ դուք տեսած խավարաւուների  
գլխի վրա:

6. Ի՞նչպես և կառուցված կուռծքը և ի՞նչ և նրան ամրա-  
կցված:

